

5. ԿԱՐԵՑԻՆ ՀԵԽՈՆԵԱԾ. Գծագրութիւն և Ակարչութիւն. առաջին մաս. Տըփ-  
իլիս, 1905 էջ 52,

Տարրական դպրոցների դասընթացի մէջ պատշաճաւոր տեղ  
են բռնում և գծագրութիւնն ու նկարչութիւնը. Գծագրութիւնն  
իբրև հիմք ծառայելով նկարչութեան՝ սովորեցնում է կանոնա-  
ւոր և անկանոն գծեր քաշելու վարժութիւնը. այսպիսի վար-  
ժութիւնների շնորհիւ միայն ապագայում մանկան ձեռքը կոռ-  
վորի ամբողջ մարմնի ձևերը նկարել թէպէտ վաղուց արդէն  
այս առարկաներն աւանդում են մեր՝ թէ միջնակարգ և թէ  
ծխական դպրոցներում, բայց և այնպէս մինչև այժմ հայոց լե-  
զուով կազմուած կանոնաւոր ու մատչելի ձեռնարկներ չունէինք  
գծագրութեան և նկարչութեան համար. Գէորգեան ձեռարանի  
ուսուցիչ պ. Լուսնեանի կազմած ձեռնարկը լրացնում է այդ  
թերին. առաջին մասը կազմուած է նպատակայարմար կերպով.  
բացատրութիւնները պարզ և ամփոփ են. լեզուն կանոնաւոր  
ու հասկանալի. Գրբոյեկի արտաքինը նոյնպէս լաւ է, նկարները  
մաքուր և որոշ:

6. Մ. 8. ՋԻՈՑ ա. Քիւրտ պիկ (գծեր հայ-քրդական կենքէն) երկ. տպ. Ս. Պե-  
տերբուրգ 1904 թ., բ. Քիւրտ պէկ բ. հատողիկ. Արամի:

Շւոտի գրքովիները ընթերցողի առաջ բաց են անում մեր  
այժմեան հանգամանքներում համեմատաբար արդէն նսեմացած  
հայի վէրքերը. մոռացուած թշուան Տաճկահայերի խրոնիկական  
վէրքերը... Հեղինակն իբրև Տաճկահայ քաջ տեղեակ է հայ-  
քրդական յարաբերութիւններին և ճշտութեամբ նկարագրում  
է քրդական բարքերն ու խժդժութիւնները, որոնց պատճառով  
«Բալու գաւառը ժթ. դարի սկզբներին ունէր 253 գիւղ, որոն-  
ցից 120-ը զուտ հայացնակ էին: Մնացեալ 133 գիւղերում կը  
բնակէին հայ և քիւրտ խառն: Այդ 253 գիւղերում բնակուող  
հայերի ընդհանրութիւնն էր Բալու քաղաքի հայ բնակիչների  
հետ 60—70 հազար, իսկ քրդերին՝ մօտ 30 հազար հոգի: Այժմ  
այդ գիւղերէն գոյութիւն ունին միայն 248 գիւղեր, ո-  
րոնցմէ 200-ը քրդաբնակ են՝ անխառն, և միայն 48-ը հայա-  
ցնակ: Նոյն իսկ այդ 48 գիւղերէն մի քանիսը հայ և քիւրդ  
խառն կը բնակին: Այդ գաւառում այժմեան հայերի թիւն է  
ընդամենը հազիւ 17—18 հազար. մինչդեռ քրդերի թիւը 60—  
65 հազարի կը յանգի... էջ 5—6.

Ուրեմն մօտ մի դար ժամանակամիջոցի ընթացքում հա-  
յացնակ 120 գիւղից մնացել է միայն 48 գիւղ, այն էլ խառն

աղքարնակութեամբ, իսկ հայերի թիւը 60—70 հազարից իջել է 17—18 հազարի. ահա ամենամեծ չարիքը, որ սպառնում է հայութիւնը ոչնչացնել հայերի երկրում... Հեղինակը գառնացած սրտով աւելացնում է վերոյիշեալ տողերին. «Հայ աղքարնակութեան թուի այդ խոշորիկէկ սահմանափակումը յատուկ չէ, իհարկէ, միայն Բալու գաւառին էջ 6—7, Քրդական ցեղերը միմեանց թշնամի լինելով՝ երբեմն յարձակում են միմեանց վրայ, հալածում իրար և մինոյն ժամանակ թալանում ու աւերում են հայաբնակ գիւղերը՝ խրախուսուելով տաճիկ կառավարութեան պաշտօնեաներից. Հստ Շւոտի աւելի կատաղի հայակեր են լինում քրդացած հայերը: «Արամն» իբրև նոր գաղափարների տէր երիտասարդ փորձում է շեղուել աւանդական երկչութաղաքականութիւնից և իւր անձնական քաջութեամբ քրդերի համակրութեան է արժանանում, բայց հետևանքն այն է լինում, որ ամբողջ գիւղը քարուքանդ է լինում և գիւղացին «կանիծէր Արամին»....

ԲՐԻՉ

### Մատենագրական նորութիւններ

1. Խտալիայի Ֆլորէնցիա քաղաքում երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ Անատօլիո Լատինօի մի հոյակապ և պատկերագարդ աշխատութիւն «Gli Armeni e zeitun» վերնագրով, որի մէջ մանրամասնաբար առաջ են բերուած Զէյթունի տեղեկագիրը և ժողովրդագրական ու պատմական ընդարձակ տեղեկութիւններ: Հեղինակը մի զանի տարիներ ապրել է Կիլիկիայում, ականատես է եղել տեղական անցքերին և բոլոր նիւթերը անձամբ ժողովել:

2. Դր. Բագրատ Խալաթեանցը, որ առաջ Բերլինում, իսկ այժմ Հայութեարդ քաղաքում Հայ լեզուի դասաւանդութեան պաշտօնն ունի, նորերս հրատարակել է Neue heidelberg. Iahresbücher XIV հրատարակութեան մէջ իւր մի աշխատութիւնը Die armenische Literatur des 19 Jahrhunderts, որ արտասպեկ է և առանձին գրքոյկով. այս աշխատութեան մէջ հեղինակը մի ակնարկ է ձգել XIX դարու հայ գրականութեան վերայ առհասարակ:

3. Հունգարիայի Սամօշվար քաղաքում լոյս է տեսել Հունգարէն մի բրօշիւր «Az Örmény kereszt—Հայերէն խաչ—վերնագրով մերզա Gyula-ի աշխատութեամբ: Հեղինակը ունի նոյն լեզուով և մի քանի ուրիշ աշխատութիւններ հրատարա-